ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 18-Լ

«24» 01 2025 թ. գ. Երևան

ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Տավուշի կայազորի զինվորական դատախազ Արտաշես Ասատուրի Ոսկանյանին Արարատի կայազորի զինվորական դատախազի պաշտոնին փոխադրելու և Արտակ Աշոտի Ավետիսյանին Տավուշի կայազորի զինվորական դատախազի պաշտոնին փոխադրելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2025 թվականի հունվարի 10-ի համապատասխանաբար 20-Ա և 22-Ա հրամանները և այն, որ անհրաժեշտ է նրանց միջև կատարել վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Կատարել Ա. Ոսկանյանի կողմից՝ Տավուշի կայազորի զինվորական դատախազության վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում, իսկ Ա. Ավետիսյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

Հանձնախմբի ղեկավար՝

Էլիզբարյան Գրիգոր -	Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ, զինվորական դատախազ

Հանձնախմբի անդամներ՝

Աղաբալյան Էրիկ -	Տավուշի կայազորի զինվորական դատախազի տեղակալ
Առաքելյան Ռուբեն -	Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ

Նազարեթյան Արմինե -	Հայաստանի Հանրապետության դատախազության արխիվի բաժնի պետ
Ղահրամանյան Մարուշ -	Հայաստանի Հանրապետության դատախազության ընդհանուր բաժնի պետի պաշտոնակատար
Մանուկյան Լիաննա -	Հայաստանի Հանրապետության դատախազության առաջին բաժնի պետ
Բաղալյան Ինգա-	Տավուշի կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժնի պետ:

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2025 թվականի փետրվարի 17-ը:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ
ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ **Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**